ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.02.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/22

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 20.01.2020թ. թիվ 26/26-1/545-2020 գրությամբ Ա/Ձ Կարինե Բախշինյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 17.01.2020թ. թիվ 1/18-2/1860-2020 գրության հիման վրա, 20.01.2020թ. թիվ 26/26-1/545-2020 գրությամբ նախաձեռնել է Ա/Ձ Կարինե Բախշինյանին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Ա/Ձ Կարինե Բախշինյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Ա/Ձ Կարինե Բախշինյանը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ «ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/1» գնման ընթացակարգի շրջանակներում ներկայացրել է հայտ, որի թիվ 1 հավելվածում աշխատողների թիվը թվերով նշել է «10», իսկ տառերով՝ «հինգ»: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից առաջարկվել է կատարել շտկում, որը իր կողմից չի կատարվել տեխնիկական պատճառներով, այն է՝ ինտերնետ կապի բացակայության պատճառով:

Ինչպես նաև նշել, որ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ մասի համաձայն մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Ա/Ձ Կարինե Բախշինյանի դիրքորոշման համաձայն՝ վերջինս չի բավարարում վերը նշված պայմաններին, իսկ ընթացակարգի գնահատող հանձնաժողովը պետք է հիմք ընդուներ տառերով գրվածը, շտկումը չկատարելու դեպքում էլ մերժեր Մասնակցի հայտը:

Մասնակիցը խնդրել է, հաշվի առնելով վերոգրյալը՝ իրեն չընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում:

Մասնակիցը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/22 ընթացակարգի շրջանակներում 29.01.2020թ. ժամը 12:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր կամ ներկայացուցիչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 17.01.2020թ. թիվ 1/18-2/1860-2020 գրությամբ

հայտնել է, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար կազմակերպված ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/1 ծածկագրով գնման ընթացակարգի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) շրջանակում Ա/Ձ Կարինե Բախշինյանի կողմից ներկայացված հայտի թիվ 1 հավելվածում առկա էր անհամապատասխանություն: Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» N 526-Ն որոշման 41-րդ կետի (հետայսու նաև՝ Կարգ) 15.01.2020թ-ին Ա/Ձ Կարինե Բախշինյանին ծանուցվել է ներկայացնել հայտի շտկված փաստաթղթերը: Սահմանված ժամկետում շտկված փաստաթղթերը չեն ներկայացվել և կարգի 42-րդ կետի համաձայն հայտը մերժվել է:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/22 ընթացակարգի շրջանակներում 29.01.2020թ. ժամը 12:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/22 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

1. ՍՑ-ՆԳ-2020/22 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.
2. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Կարինե Բախշինյանը:
3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.01.2020թ.-ի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ Ա/Ձ Կարինե Բախշինյանի կողմից ներկայացված հայտի թիվ 1 հավելվածի 3-րդ կետը սխալ է լրացված:
4. Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ որոշվել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել Մասնակցին սահմանված ժամկետում շտկել անհամապատասխանությունը:
5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 15.01.2020թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ մերժել է Մասնակցի հայտը, այն հիմնավորմամբ, որ Ա/Ձ Կարինե Բախշինյանի կողմից ներկայացված հայտում առկա անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չի շտկվել:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 20.01.2020թ. թիվ 26/26-1/545-2020 գրությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 17.01.2020թ. թիվ 1/18-2/1860-2020 գրությունը և կից փաստաթղթերը, Մասնակցի կողմից Ընթացակարգի շրջանակներում ներկայացված դիրքորոշումը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում սպանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում՝ բացառությամբ մասնակցի կողմից գնային առաջարկի և հայտի ապահովման ներկայացման դեպքերի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը կամ դրանց մի մասը ներկայացված են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով և հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար***: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Կարինե Բախշինյանը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.01.2020թ. թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ Ա/Ձ Կարինե Բախշինյանի կողմից ներկայացված հայտի թիվ 1 հավելվածի 3-րդ կետը սխալ է լրացված:

Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ որոշվել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել Մասնակցին սահմանված ժամկետում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ Մասնակիցը 13.01.2019թ. ծանուցվել է արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 15.01.2020թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ մերժել է Մասնակցի հայտը, այն հիմնավորմամբ, որ Ա/Ձ Կարինե Բախշինյանի կողմից ներկայացված հայտում առկա անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չի շտկվել:

Այսպիսով՝ Մասնակցի կողմից ներկայացված հայտի թիվ 1 հավելվածի 3-րդ կետով աշխատակիցների քանակը տառերով նշվել է «հինգ», իսկ թվով՝ «10»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընթացակարգի հրավերով չի սահմանվել ծառայության մատուցման համար անհրաժեշտ աշխատակիցների նվազագույն քանակի վերաբերյալ պահանջ, ուստի գտնում եմ, որ Մասնակցի կողմից հայտով ներկայացված թիվ 1 հավելվածում աշխատակիցների քանակի հետ կապված թվի և տառի անհամապատասխանությունը՝ վրիպակը, չի կարող դիտվել որպես Մասնակցի կողմից գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտման փաստի արձանագրման բավարար հիմք:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ նման պայմաններում Ա/Ձ Կարինե Բախշինյանը «ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում չի խախտել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված ստանձնած պարտավորություն, ուստի առկա չեն վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 20.01.2020թ. թիվ 26/26-1/545-2020 գրությամբ Ա/Ձ Կարինե Բախշինանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**